Ս.ՇՏԻԿՅԱՆ

«ԵՐԿԱԹԵ ԴԻՄԱԿԸ»

Դու անշուշտ հիշում ես, որ բոլորովին վերջերս մեզ մոտ ցուցադրվում էր մի կինոնկար, որն ուներ առաջին հայացքից տարօրինակ՝ «Երկաթե դիմակը» վերնագիրը և որը, ինչպես վկայում էր նրա ազդագիրը, նկարահանվել էր ըստ Ալեքսանդր Դյումայի համանուն վեպի։ Իսկ դու գիտե՞ս, որ «Երկաթե դիմակի» ամբողջ պատմությունը ճշմարիտ իրողություն է։

Ֆրանսիայի հարավում գոյություն ունի փոքրիկ մի կղզի, որը դեռ շատ հնուց հայտնի էր Սանտա Մարգարիտա անունով։ Այդ կղզին փոքրիկ է այնքան, որ ոչ մի քարտեզի վրա չի նշվում, և դա՝ նաև այն պատճառով, որ մշտապես եղել է Ֆրանսիայի քաղաքական հանցագործների կալանավայրը։ 1698 թ. օգոստոսին, ուժեղացված պահակախմբի հսկողությամբ, այստեղ բերվեց խորհրդավոր մի կալանավոր։ Վերջինս բարձրահասակ էր, բարետես, սպիտակ մաշկ ուներ, ազատ խոսում էր ֆրանսերեն։ ՈՒշագրավն այն էր, որ կալանավորը դեմքին սև կտորից (և ոչ թե երկաթից) պատրաստված դիմակ ուներ, առջևի կողմից շարժական ծնոտով, որը հնարավորություն էր տալիս նրան ուտելիք ընդունել։ Դիմակը ծածկում էր կալանավորի ամբողջ գլուխը և հատուկ ամրակներով կոճկվում էր ծոծրակի մոտ։ Վերջինիս հետ խոսելու կամ նրան որևէ գործով դիմելու իրավունք ուներ միայն պահակախմբի պետը՝ կապիտան Սեր-Մարսը, մյուսներին այդ բանն արգելված էր մահվան սպառնալիքով։ Սանտա Մարգարիտա կղզու բանտարկյալները կարողացան նկատել հետաքրքիր մի առանձնահատկություն։ Սովորաբար դիմակավոր կալանավորին, ի տարբերություն մյուսների, Սեն-Մարսը դիմում էր մեծ հարգանքով և անպայման «Ազնիվ պարոն» հորջորջումով։

Մի փոքր ժամանակ Սանտա Մարգարիտայում մնալուց հետո, ուժեղացված պահակախումբը խորհրդավոր կալանավորի հետ միասին ճանապարհ ընկավ դեպի Փարիզ։ Ամբողջ ճանապարհին խստությունները մնում էին նույնը։ Պահակախմբի անդամները իրավունք ունեին առանց նախազգուշացնելու կրակ բանալ այն դեպքերում,

եթե փոքր-ինչ կասկածելի բան նկատեին, իսկ ինքը՝ կապիտան Սեն-Մարսը, գիշերային դադարների ժամանակ հսկողությունն անձամբ ստուգելուց հետո, ավելի ապահով լինելու համար քնում էր «իր» կալանավորի հետ միասին, նույն սենյակում: Այսպիսի խստաշունչ հսկողության պայմաններում, ահա, կալանավորին հասցրեցին Փարիզ և 1698 թ. սեպտեմբերի 19-ից փակեցին հանրահռչակ Բաստիլում, իսկ ինքը, կապիտան Սեն-Մարսը նշանակվեց Բաստիլի պարետ:

Դու, անկասկած, տեղեկություններ ունես Բաստիլի մասին և գիտես, որ այն սկսել է կառուցվել Փարիզի ծայրամասում, 1370 թվականից, որպես բերդ՝ մայրաքաղաքը հարձակումներից պաշտպանելու համար, սակայն հետագայում, 16-րդ դարից սկսած, ճարտարապես Դ'Օրբինոյի նախագծով, վերածվել է սարսափելի բանտի. ի դեպ, ճարտարապետն ինքը շուտով դարձավ իր մտահղացած բանտի կալանավորը: Բաստիլում կային վանդակ հիշեցնող երկաթե բանտախցեր, կային այնպիսիները, որտեղ կարելի էր տեղավորվել միայն կռացած, երկտակված կամ միայն կանգնած վիճակում: Կար բանտախուց, որի հատակը ծածկված էր թզաչափ բարձրության ջրով, իսկ դա նշանակում էր, որ այնտեղ բանտարկվածը օրեր ու ամիսներ շարունակ պետք է կանգներ, նստեր կամ պառկեր ջրի մեջ, կար վերջապես «Գեղեցկության պալատը»՝ հաճելի կահավորված ու զարդարված մի սենյակ, որի հատակը, սակայն, բացովի էր և այնտեղ մտած անփորձ կալանավորն ընկնում էր պտտվող դանակների վրա...

Այս բոլորն էր ահա պատճառը, որ 1789 թ. հուլիսի 14-ին ապստամբած ֆրանսիական ժողովուրդը քարուքանդ արեց Բաստիլը՝ բռնակալության ու սարսափի այդ սիմվոլը, իսկ նկարիչ Ֆ.Լ. Պրիերը այդ այուժեով նկարեց «Բաստիլի գրավումը» հայտնի նկարը:

Ահա այս բանտում դիմակավոր կալանավորը պետք է անցկացներ ամբողջ հինգ տարի:

Մի անգամ կալանավորը ճաշից հետո գդալի պոչով ինչ-որ բան գրեց իր անագե ափսեի հատակին և օգտվելով բարեպատեհ առիթից, ափսեն պատուհանից նետեց ցած: Բաստիլի ստորոտում գտնվող մի երիտասարդ գտավ այն և ափսեի վրայի կնիքից

իմանալով նրա պատկանելության մասին (Բաստիլին պատկանող բոլոր իրերը՝ ամաններ, պատառաքաղներ, աթոռներ և այլն, ունեին իրենց առանձնահատուկ կնիքը) բերեց, հանձնեց Սեն-Մարսին։

- Դու կարդացի՞ր սա, – ահեղ ձայնով հարցրեց բանտապետը։

- Մի թեթև, – պատասխանեց երիտասարդը։

Այս խոսակցությունից հազիվ կես ժամ անց երիտասարդին Սենա գետի ափին խեղդված գտան։

Համանման մի դեպք էլ տեղի ունեցավ նախորդից մոտ մի տարի անց։ Այս անգամ կալանավորը իր բանտային շապիկի վրա երկու տողի չափ ինչ-որ բան էր գրել և դարձյալ պատուհանից գցել էր ցած։ Շապիկն այս անգամ գտավ մի ձկնորս և բերելով Բաստիլ, տվեց Սեն-Մարսին։

- Դու կարդացե՞լ ես այստեղ գրածը, – հարցրեց Սեն-Մարսը։

- Ես անգրագետ եմ, – պատասխանեց ձկնորսը։

Չնայած այս հավաստիացմանը՝ ձկնորսին բաց չթողեցին։ Եվ միայն այն բանից հետո, երբ բանտապետը համոզվեց, որ ձկնորսն, իրոք, անգրագետ է, և որ նրա մոտ գտնված շապիկն, իրոք, ոչ ոք չի տեսել, առավել ևս՝ կարդացել, արձակեց նրան, ասելով հետևյալ բազմանշանակալից խոսքերը.

- Գնա՛։ Եվ աղոթիր աստծուն, որ կարդալ չգիտեիր։

Չնայած այս անլուր խստություններին, հանելուկային կալանավորի հետ վարվում էին որոշակի հարգանքով։ Մի անգամ նա Սեն-Մարսից (կալանավորի բանտախուցը մտնելու և նրա հետ խոսելու իրավունք ուներ միայն Սեն-Մարսը) խնդրեց կիթառ (ըստ այլ տվյալների՝ թավջութակ) և համապատասխան նոտաներ՝ նվագելու համար։ Նրա խնդրանքը բավարարվեց անմիջապես։ Ի տարբերություն Բաստիլի մյուս բանտարկյալների, որոնք զբոսանքի էին դուրս բերվում օրը մեկ անգամ, հանելուկային կալանավորը կարող էր օրվա ցանկացած պահին դուրս գալ բանտի բակը՝ զբոսնելու,

իհարկե, համապատասխան պահակախմբով և միայն այն բանից հետո, երբ բակում ոչ ոք չէր լինում։ Հայտնի է, վերջապես, ևս մի դեպք։ Կալանավորին հանդիպելու և նրա հետ խոսելու ցանկություն հայտնեց պետական-կառավարական բարձրաստիճան գործիչ, Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրության առաջին խորհրդական լորդ Բուալտրուեն։ Եվ ֆրանսիական պետության մասշտաբով անգամ նշանավոր այս պաշտոնյան, լորդը, կալանավորի հետ խոսում էր ոտքի վրա կանգնած։

Խորհրդավոր կալանավորը մահացավ 1703 թ. նոյեմբերի 19-ին, Բաստիլում և թաղվեց Բաստիլից քիչ հեռու գտնվող Ս. Պետրոս եկեղեցու գավթում։

Սեն-Մարսի հրամանով և նրա անձնական հսկողությամբ, Բաստիլի այն բանտախուցը, որտեղ բանտարկված էր եղել կալանավորը, վերակառուցվեց գրեթե հիմնիվեր։ Բանտախցի հատակի տախտակները մեկ առ մեկ հանվեցին և փոխարինվեցին նորերով, պատերը քերվեցին, ապա վերաներկվեցին, եղած անշուք կահկարասին դուրս բերվեց բերդի բակը և այրվեց։ Այսպես ավարտվեց նրա կյանքի տխուր պատմությունը...

Առաջին անգամ հանելուկային կալանավորի մասին գրեց Վոլտերը։ Ինչպես հայտնի է, ֆրանսիական ժողովրդի այս հռչակավոր զավակը իր սայրասուր պամֆլետների, պետության ու հոգևորականության դեմ ծավալած անողոք քննադատության պատճառով Բաստիլ էր ընկել երկու անգամ՝ 1717 և 1726 թվականներին։ Որտեղի՞ց էր նրան հայտնի եղել դիմակավոր կալանավորի մասին, ավելի կամ պակաս կարևոր ուրիշ ի՞նչ տեղեկություններ էր ունեցել նա իր ձեռքի տակ, որոշակիորեն չգիտենք։ 1751 թ. Վոլտերը հրատարակեց իր հերթական «Լյուդովիկոս XIV-ի դարը» աշխատությունը, որտեղ էլ որոշ տեղեկություններ հաղորդեց այս կալանավորի մասին և ի դեպ, ինքն էլ նրան տվեց այդ ժամանակից մինչև մեր օրերը, աշխարհի բոլոր գիտնականներին տանջող միևնույն հարցը. ո՞վ էր «Երկաթե դիմակը»։ Այս առիթով գրված զանազան մենագրությունների, լրագրային հոդվածների, այլևայլ ամսագրերում տպագրված ուսումնասիրությունների թիվը արդեն մոտենում է հինգ հարյուրի, գործին միջամտել են պատմաբաններ, հրապարակախոսներ, ճանաչված

իրավաբաններ, ժուռնալիստներ, գրողներ և անգամ... բժիշկներ ու վարսավիրներ։ Ժամանակին տարածվեց և ինչ-որ չափով ընդհանրացավ այն կարծիքը, որ «Երկաթե դիմակը» Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի խորթ եղբայրն էր, և քանի որ նա էլ էր ձգտում թագավոր դառնալ և այդ նպատակով մեծ թվով կողմնակիցներ էր հավաքագրել, ապա թագավորի կողմից դատապարտվել էր հիշյալ անմարդկային պատժին։ Այս հիմքի վրա էլ հենց գրված է Ալեքսանդր Դյումայի՝ վերևում հիշատակված «Երկաթե դիմակ» վեպը և նկարահանված է կինոֆիլմը։ Սակայն գիտնականների պրպտումները աստիճանաբար մի կարևոր բան պարզեցին. թագավոր Լյուդովիկոս XIV-ը ո՛չ խորթ, ո՛չ էլ հարազատ եղբայր չի ունեցել։ ՈՒրեմն ո՞վ էր «Երկաթե դիմակը»։ Ինչո՞ւ էր նրա համար այդպիսի տարօրինակ պատիժ որոշվել։ Ինչո՞վ բացատրել նրա նկատմամբ կիրառվող դաժան խստությունները և զարմանալի հոգատարությունը, այս և այս բնույթի բազմաթիվ գայթակղիչ հարցերը, ավելի կամ պակաս հավանական ենթադրություններից բացի, ուրիշ պատասխան չունեն։

Շարադրված այս ամբողջ պատմությունն, իհարկե, հետաքրքիր է և զարմանալի քեզ համար։ Բայց դու ավելի կզարմանաս, եթե ասեմ, որ «Երկաթե դիմակի» տակ թաքնված թեկնածուների թվում, երկար ժամանակ հիշատակվում էր նաև... մի հայազգի։ Դա նշանավոր Ավետիք Եվդոկիացին էր, որը ծնվել էր 1657 թ. և իր ծննդավայրում նախնական կրթություն ստանալուց հետո կարողացել էր այնպես լավ դրսևորել իրեն որպես ազգային գործիչ, որ 1702 թվականին նշանակվել էր Պոլսի հայկական համայնքի առաջնորդ։ Սակայն հօգուտ իր ժողովրդի նրա ծավալած եռանդուն գործունեությունը ամենևին դուր չեկավ Պոլսի ֆրանսիական կառավարության դեսպան Ֆերիոլին, որի ջանքերով էլ Ավետիք Եվդոկիացին 1706 թվականին հանելուկային ձևով անհայտացավ Պոլսից և երկարատև թափառումներից հետո, 1709 թ. դեկտեմբերի 18-ին, որպես բանտարկյալ վերջնականապես հայտնվեց Բաստիլում։

Այսքանն էր մոտավորապես այն ամենը, ինչ հայտնի էր Ավետիք Եվդոկիացու մասին, սակայն հայ պատմաբանների և մանավանդ Միքայել Չամչյանի և Լեոյի պրպտումները նորանոր ու կարևոր փաստեր բացահայտեցին։ Այսօր արդեն ապացուցված է, որ Ավետիք Եվդոկիացին մոտ չորս տարի Բաստիլում տառապելուց

հետո ազատ է արձակվել, բնակվել է Փարիզում և մի որոշ ժամանակ էր նշանակվել է քաղաքի եկեղեցիներից մեկի քահանա։ Ազատ ժամերին կատարել է ձեռագրերի արտագրություններ և ֆրանսերենից-հայերեն թարգմանություններ, գրել է գրաբար բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը հրատարակվել են ժամանակի պարբերականներում։ Վախճանվել է Փարիզում, 1711 թ., համեմատաբար երիտասարդ՝ 54 տարեկան հասակում։

Ավետիք Եվդոկիացու հարցն, այսպիսով, վերանում է, սական «Երկաթե դիմակի» առեղծվածը դեռ մնում է...

Պիոներ, 1987, № 8, օգոստոս, էջ 22

Պիոներ կանչ, 1990, № 54, հուլիսի 18